

Ա Մ Բ Ա Գ Ր Ի Կ Ո Ղ Մ Ի Ց

«Աշխատություններ»-ի այս երկրորդ հատորն իր մեջ ընդգրկում է զբամաղիտական, հնագիտական և պատմական բնույթի չորս ուսումնառիրություններ:

Պատմական գիտությունների թեկնածու Ա. Շահնազարյանի «Սրբանի շրջանի Սառնակունք գյուղի մոտ հայտնաբերված գանձք ուղագրավ է նրանով, որ այդ գանձն իր մեջ պարունակում է մեր թվականությունից առաջ երկրորդ զարի կեսերից մինչև մեր թվականության առաջին դարի 30-ական թվականներին պատմանող մեծ մասամբ հռոմեական, ինչպես նաև սելեկյան, փյունիկյան, պարսկական, կապաղովիկական, փյուղիական, պոնտական և հայկական 178 արծաթյա դրամներ, որոնք ցոյց են տալիս Հայաստանի կուլտուր-անտեսական սերտ կապերն իր շրջապատի երկրների հետ:

Սակայն, մեզ թվում է, որ միանդամայն կամայական է հեղինակի կողմից դրամների այդ ժաղավածուն Ֆիդրանի կամ այլ թագավորների մասն պատերազմների ու արքայական գանձարանների հետ կապելու փորձը: Հսու էության, հեղինակը չի կարողացել վեր հանել այդ բազմազան դրամների Հայաստանի հնագույն շրջանի տնտեսական պատմության և այլ երկրների հետ վարած տունտրի պարզաբանման համար ունեցած խոշոր նշանակությունը:

Պատմական գիտությունների թեկնածու Վ. Աբբահամյանը «Արհեստները և համբարական կազմակերպությունները Հայաստանում 9—13-րդ դարերում» աշխատությունը հրատարակելուց հետո, այժմ ձեռնամուխ է եղել առանձին արհեստների վերաբերող մասերի հատուկ ուսումնառիրության, որոնցից ներկա հատորի մեջ զետեղում ենք հեղինակի «Միջնադարյան Հայաստանի գեղինքերի տեսակները» աշխատությունը, որոնդ մեր թանգարանում պահվող պեղածո միջնադարյան զենքերի մեջորդությունը և պրավոր բարձավելիվ աղբյուրների հիման վրա հեղինակն

այնուամենայնիվ կարողացել է սխտեմատիզացիայի ենթարկել և պարզել մի շարք դենքերի գործածության եղանակն ու նրանց անունները:

Հատորի մեջ, Պատմության բաժնում տեղափորն Ենք
 18 և 19-ը գարերի հայ ազատազրական պայքարին վերաբերող
 երկու ուսումնասիրություն, որոնցից առաջինը՝ պատմական զի-
 տությունների թեկնածու Ա. Միքոյանի «Հայ ազատազրական
 շաբժումները Սյունիքում» (1722—1730 թ. թ.)», բովանդակում է
 Դավիթ-Բեկի զիվավորությամբ առաջ եկած մեծ ապստամբու-
 թյունը՝ պարսկական և թուրքական դարավոր լծից ազատազրվե-
 լու համար, իսկ երկրորդը՝ պատմական զիտությունների թեկ-
 նածու Վ. Մելիքսեթյանի՝ «Զեյթունի 1862 թվականի ազըս-
 տամբությունը ընդգրկում է Թուրքիայի՝ հայերին ոչնչացնե-
 լու համար վարած պրովինկացիոն քաջաքականությունը և անդ-
 լու-ֆրանսիական զիվանագիտական խաղերը՝ Մերձավոր Արևելքը
 տիրապետելու և Թուրքիայի գերիշխանության տակ գտնվող
 փոքր ազգություններին, այդ թվում նաև հայերին, իրենց իմ-
 պերիալիստական նպատակներին ծառայեցնելու համար:

Ընկեր Միքոյանի և Մելիքսեթյանի աշխատությունների
 մասնագիտական խմբազրությունը կատարել է պատմական զի-
 տությունների թեկնածու Լեռն Շաբայանը, Ցացածները խմբա-
 զրել ենք մենք:

Կ. 2.